ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2015
02.2015
03.2015
04.2015
05.2015
06.2015
07.2015
08.2015
09.2015
Սեպտեմբեր
10.2015
11.2015
12.2015

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Սեպտեմբեր

թիվ 9 (205)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանելու, ինչպես նաև «Կապիտալ Ինվեստմընթս» ՓԲԸ-ի կողմից ստեղծված «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I» հիմնադրամը, «Սեֆ Ինտերնեյշնլ ՈւՎԿ» ՍՊԸ-ի և «Արարատբանկ» ԲԲԸ-ի մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու և 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 187-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2000 թվականի ապրիլի 25-ի թիվ 96 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 188-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 193-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 325-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին»

20 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել է*** «Կապիտալ Ինվեստմընթս» փակ բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I» հիմնադրամը (որոշում թիվ 197Ա):
- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 10.25% (որոշում թիվ 198Ա):
- ***Գրանցվել են*** «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ և «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Աբովյան» և «Բաղրամյան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/679Ա, 1/728Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 30000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/718Ա) և 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/731Ա):

Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2000 թվականի ապրիլի 25-ի թիվ 96 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նվազեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի կողմից դրամական փոխանցումների կատարման ժամկետները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանել դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետներ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և 2-րդ մասի «ե» կետը, ինչպես նաև «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2000 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումների կատարման առավելագույն ժամկետներ սահմանելու կարգը» հաստատելու մասին թիվ 96 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասնհինգերորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
27 օգոստոսի 2015 թ., N 187-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. օգոստոսի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.09.2015 թ. (ՀՀԳՏ N23 (535), 15.09.2015):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի օգոստոսի 25-ի թիվ 187-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություններ) միջնորդությամբ իրականացվող դրամական փոխանցումների, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներ ուղղված վճարումների և հանրային ծառայությունների մատուցման դիմաց կատարվող վճարումների իրականացման առավելագույն ժամկետները:

2. Սույն կարգով սահմանված առավելագույն ժամկետները չեն կիրառվում դրամական այն փոխանցումների դեպքում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներ ուղղված վճարումների և հանրային ծառայությունների մատուցման դիմաց կատարվող վճարումների), երբ վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության և շահառուի միջև կնքված գործակալության, կոմիսիայի կամ հանձնարարության պայմանագրով սահմանված են այլ ժամկետներ:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝

1) վճարման կարգադրություն՝ դրամական միջոցները փոխանցելու նպատակով ֆինանսական կազմակերպությանը տրված հանձնարարություն՝ վճարել կամ հանձնարարել այլ ֆինանսական կազմակերպությանը վճարել շահառուին վճարողի բանկային հաշվից՝ վճարման հանձնարարական ներկայացնելու միջոցով կամ վճարողի կողմից կանխիկի տրամադրման կամ վճարողի էլեկտրոնային փողի միջոցով,
2) դրամական փոխանցում (այսուհետ՝ փոխանցում)՝ ֆինանսական կազմակերպությունների միջնորդությամբ՝ վճարողի կողմից շահառուին ուղղված՝
   ա) վճարում, որի դիմաց վճարողին տրամադրվում է գույք կամ գույքային իրավունք կամ մատուցվում է ծառայություն կամ կատարվում է աշխատանք, այդ թվում նաև՝ հանրային ծառայությունների մատուցման դիմաց կատարվող վճարում, կամ
   բ) վճարում, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե, կամ
   գ) դրամական միջոցների փոխանցում, որի դիմաց վճարողին չի տրամադրվում գույք կամ գույքային իրավունք, չի մատուցվում ծառայություն, չի կատարվում աշխատանք,
3) հանրային ծառայությունների մատուցման դիմաց կատարվող վճարում՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի «ա», «բ» և «գ» կետերով սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում ներառված ծառայությունների դիմաց կատարվող վճարում,
4) փոխանցման մասին տեղեկացում՝ վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից շահառուին փոխանցման մասին տեղեկատվության տրամադրում,
5) բանկ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկ կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
6) վճարահաշվարկային կազմակերպություն՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած վճարահաշվարկային կազմակերպություն,
7) ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբաժանում՝ ֆինանսական կազմակերպության գլխամաս կամ ֆինանսական կազմակերպության մասնաճյուղ,
8) վճարող՝ փոխանցումը նախաձեռնող անձ (առաջին վճարման կարգադրությունը ներկայացնող անձ),

9) շահառու՝ վճարողի վճարման կարգադրությամբ փոխանցվող գումարի վերջնական հասցեատեր,
10) վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն՝ վճարողի կողմից ներկայացված վճարման կարգադրությունը ստացող և կատարող բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպություն,
11) շահառուին սպասարկող կազմակերպություն՝ շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն՝ բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպություն կամ Հայաստանի Հանրապետության գանձապետարան, որը պետք է իրականացնի փոխանցվող գումարի վճարումը շահառուին,
12) միջնորդ բանկ՝ վճարման կարգադրությունը ստացող բանկ, որը տարբերվում է վճարողին և շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություններից,
13) գործառնական օր՝ ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված՝ ֆինանսական կազմակերպության աշխատանքային օրվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ստանում և կատարում է վճարման կարգադրությունները՝ իրականացնելով հաճախորդների սպասարկումը,
14) վճարման կարգադրության ստացման օր՝ ֆինանսական կազմակերպության աշխատանքային այն օրը, երբ ֆինանսական կազմակերպությունը ստանում է վճարման կարգադրությունը: Եթե ֆինանսական կազմակերպությանը վճարման կարգադրությունը ներկայացվում է գործառնական օրվա ավարտից հետո, ապա վճարման կարգադրությունը համարվում է ստացված հաջորդ աշխատանքային օրվա գործառնական օրվա բացման պահին,
15) վճարման կարգադրության կատարման օր՝
   ա) վճարողը և շահառուն տարբեր կազմակերպությունների կողմից սպասարկվելու դեպքում՝ այն գործառնական օրն է, երբ վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից, ի կատարումն վճարողի վճարման կարգադրության, վճարման շղթայի հաջորդ մասնակցին ուղարկվում է կարգադրություն,
   բ) վճարողը և շահառուն միևնույն ֆինանսական կազմակերպությունում սպասարկվելու դեպքում՝ շահառուին վճարելու օրն է,
16) վճարման օր՝ այն գործառնական օրն է, երբ վճարման կարգադրությունում նշված գումարը ենթակա է վճարման շահառուին վերջինիս սպասարկող ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբաժանման կողմից,
17) վերջնահաշվարկ՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:

4. Սույն կարգով սահմանված փոխանցումների կատարման առավելագույն ժամկետները վճարման տարբեր շղթաների դեպքում ամփոփ ներկայացված են սույն կարգի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

ԳԼՈՒԽ 2. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԵՐԲ ՎՃԱՐՈՂԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆ ՍՊԱՍԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

5. Եթե վճարողը և շահառուն սպասարկվում են միևնույն ֆինանսական կազմակերպության կողմից, ֆինանսական կազմակերպությունը պարտավոր է ապահովել վճարումը շահառուին՝
1) վճարողի վճարման կարգադրությունում կատարման և վճարման օր նշված չլինելու դեպքում՝ վճարման կարգադրության ստացման օրվա ընթացքում,
2) վճարման կարգադրությունում կատարման օր նշված լինելու դեպքում՝ վճարման կարգադրությունում նշված կատարման օրվա ընթացքում,
3) վճարման կարգադրությունում վճարման օր նշված լինելու դեպքում՝ վճարման կարգադրությունում նշված վճարման օրվա ընթացքում:

6. Սույն գլխի իմաստով՝ միևնույն ֆինանսական կազմակերպությունում սպասարկվող վճարող և շահառու չեն հանդիսանում էլեկտրոնային փողով հաշվարկների իրականացման համակարգում գրանցված օգտագործողները և ծառայություն մատուցողները:

ԳԼՈՒԽ 3. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԵՐԲ ՎՃԱՐՈՂԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆ ՍՊԱՍԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՏԱՐԲԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

7. Եթե վճարողը և շահառուն սպասարկվում են տարբեր կազմակերպությունների կողմից, և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությունը վճարահաշվարկային կազմակերպություն է, ապա վճարահաշվարկային կազմակերպությունը (անկախ՝ վճարողը վճարահաշվարկային կազմակերպության գլխամասում կամ մասնաճյուղում, այդ թվում նաև՝ վճարումների ընդունման տերմինալի միջոցով անմի-

ջականորեն սպասարկվելու հանգամանքից) պարտավոր է, ի կատարումն վճարողի վճարման կարգադրության, իրեն սպասարկող բանկին կարգադրություն ուղարկել այնպիսի եղանակով և ժամկետներում, որ իրեն սպասարկող բանկը կարգադրությունը ստանա՝

1) վճարողի վճարման կարգադրությունում կատարման և վճարման օր նշված չլինելու դեպքում՝ առավելագույնը վճարողի կարգադրության ստացման օրվան հաջորդող գործառնական օրվա ընթացքում,
2) վճարողի վճարման կարգադրությունում կատարման օր նշված լինելու դեպքում՝ առավելագույնը վճարողի վճարման կարգադրությունում նշված կատարման օրվա ընթացքում, եթե վճարման կարգադրությունում նշված կատարման օրը չի համընկնում վճարման կարգադրության ստացման օրվան, հակառակ դեպքում, եթե վճարման կարգադրությունում նշված կատարման օրը համընկնում է կարգադրության ստացման օրվան՝ սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում,
3) վճարողի վճարման կարգադրությունում վճարման օր նշված լինելու դեպքում՝ այնպիսի ժամկետներում, որ շահառուին սպասարկող կազմակերպությունը հնարավորություն ունենա վճարումը շահառուին կատարելու վճարողի կարգադրությունում նշված վճարման օրը:

8. Եթե սույն կարգի 7-րդ կետի համաձայն վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությունը վճարահաշվարկային կազմակերպություն է, ապա տվյալ վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկը (անկախ վճարահաշվարկային կազմակերպությունը բանկի գլխամասում կամ մասնաճյուղում անմիջականորեն սպասարկվելու հանգամանքից) պարտավոր է վճարահաշվարկային կազմակերպության կարգադրությունը կատարել այնպիսի եղանակով և ժամկետներում, որ՝

1) շահառուին սպասարկող կազմակերպության հաշիվը միջնորդ բանկում կրեդիտագրվի և վերջնահաշվարկը կատարվի առավելագույնը վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկի կողմից կարգադրության ստացմանը հաջորդող՝ միջնորդ բանկի գործառնական օրվա ընթացքում, կամ
2) շահառուին սպասարկող կազմակերպության հաշիվը վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկում կրեդիտագրվի և վերջնահաշվարկը կատարվի առավելագույնը վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկի կողմից կարգադրության ստացմանը հաջորդող՝ շահառուին սպասարկող կազմակերպության գործառնական օրվա ընթացքում, կամ
3) վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկի հաշիվը շահառուին սպասարկող կազմակերպությունում դեբետագրվի և վերջնահաշվարկը կատարվի առավելագույնը վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկի կողմից կարգադրության ստացմանը հաջորդող՝ շահառուին սպասարկող կազմակերպության գործառնական օրվա ընթացքում:

9. Եթե վճարողը և շահառուն սպասարկվում են տարբեր կազմակերպությունների կողմից և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությունը բանկ է, ապա բանկը (անկախ՝ վճարողը բանկի գլխամասում կամ մասնաճյուղում անմիջականորեն սպասարկվելու հանգամանքից) պարտավոր է վճարողի վճարման կարգադրությունը կատարել այնպիսի եղանակով և ժամկետներում, որ շահառուին սպասարկող կազմակերպության հաշիվը միջնորդ բանկում կամ վճարողին սպասարկող բանկում կրեդիտագրվի կամ շահառուին սպասարկող կազմակերպությունում վճարողին սպասարկող բանկի հաշիվը դեբետագրվի և վերջնահաշվարկը կատարվի՝

1) վճարողի վճարման կարգադրությունում կատարման և վճարման օր նշված չլինելու դեպքում՝ առավելագույնը վճարողի կարգադրության ստացման օրվան հաջորդող գործառնական օրվա ընթացքում, ընդ որում՝ շահառուին սպասարկող կազմակերպության հաշիվը միջնորդ բանկում կրեդիտագրվելու դեպքում՝ միջնորդ բանկի գործառնական օրվա ընթացքում, իսկ շահառուին սպասարկող կազմակերպության հաշիվը վճարողին սպասարկող բանկում կրեդիտագրվելու դեպքում կամ վճարողին սպասարկող բանկի հաշիվը շահառուին սպասարկող կազմակերպությունում դեբետագրվելու դեպքում՝ շահառուին սպասարկող կազմակերպության գործառնական օրվա ընթացքում,
2) վճարողի վճարման կարգադրությունում կատարման օր նշված լինելու դեպքում՝ առավելագույնը վճարողի վճարման կարգադրությունում նշված կատարման օրվա ընթացքում, եթե վճարման կարգադրությունում նշված կատարման օրը չի համընկնում վճարման կարգադրության ստացման օրվան, հակառակ դեպքում, եթե վճարման կարգադրությունում նշված կատարման օրը համընկնում է կարգադրության ստացման օրվան՝ սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում,
3) վճարողի վճարման կարգադրությունում վճարման օր նշված լինելու դեպքում՝ այնպիսի ժամկետներում, որ շահառուին սպասարկող կազմակերպությունը հնարավորություն ունենա վճարումը շահառուին կատարելու վճարողի կարգադրությունում նշված վճարման օրը:

10. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությունը, սույն կարգի համաձայն վերջնահաշվարկի կատարման պարագայում, պարտավոր է ապահովել վճարումը շահառուին՝

1) վճարողի վճարման կարգադրությունում վճարման օր նշված չլինելու դեպքում՝ վերջնահաշվարկի կատարման օրվա ընթացքում (անկախ՝ շահառուն ֆինանսական կազմակերպության գլխամասում կամ մասնաճյուղում անմիջականորեն սպասարկվելու հանգամանքից), եթե վերջնահաշվարկը կատարվել է շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության գործառնական օրվա ընթացքում, իսկ եթե վերջնահաշվարկը կատարվել է վերջինիս գործառնական օրվանից հետո, ապա վերջնահաշվարկի կատարման օրվան հաջորդող գործառնական օրվա ընթացքում,
2) վճարողի վճարման կարգադրությունում վճարման օր նշված լինելու դեպքում՝ վճարման օրվա ընթացքում:

11. Սույն կարգի իմաստով՝ վերջնահաշվարկը կատարված է համարվում, երբ՝

1) շահառուին սպասարկող կազմակերպությունը ստանում է տեղեկատվություն վերջնահաշվարկի կատարման մասին, կամ
2) շահառուին սպասարկող կազմակերպությունը ստանում է տեղեկատվություն վերջինիս հաշվի կրեդիտագրման մասին, կամ
3) շահառուին սպասարկող կազմակերպությունը դեբետագրում է վճարման կարգադրություն ուղարկող ֆինանսական կազմակերպության հաշիվը:

Հավելված 1
«Հայաստանի Հանրապետության տարածքում
փոխանցումների կատարման առավելագույն
ժամկետների վերաբերյալ կարգի»

Փոխանցումների կատարման առավելագույն ժամկետները վճարման տարբեր շղթաների դեպքում

Սույն Հավելված 1-ում օգտագործվող հապավումներն են՝

Ֆինանսական կազմակերպության գլխամաս՝ ՖԿԳ,
Ֆինանսական կազմակերպության մասնաճյուղ՝ ՖԿՄ,
Վճարահաշվարկային կազմակերպության գլխամաս՝ ՎԿԳ,
Վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղ՝ ՎԿՄ,
Բանկի գլխամաս՝ ԲԳ,
Բանկի մասնաճյուղ՝ ԲՄ,
Միջնորդ բանկ՝ ՄԻՋ,
Հայաստանի Հանրապետության գանձապետարան՝ Գ,
Կենտրոնական բանկ՝ ԿԲ:

1. Վճարողը և շահառուն միևնույն ֆինանսական կազմակերպության կողմից սպասարկվելու դեպքում

Վճարման շղթան			Առավելագույն ժամկետ
ՖԿՄ1	ՖԿԳ	ՖԿՄ2	(1)
ՖԿՄ1	ՖԿԳ	-	(1)
-	ՖԿԳ	ՖԿՄ2	(1)
-	ՖԿԳ	-	(1)

** Փակագծում նշված մեկ օրը ներառում է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբաժանման կողմից վճարման կարգադրության ստացման օրը կամ վճարման կարգադրությունում կատարման օրը նշված լինելու դեպքում՝ կատարման օրը, որի ընթացքում պետք է կատարվի վճարումը շահառուին:*

2. Վճարողը և շահառուն տարբեր կազմակերպությունների կողմից սպասարկվելու դեպքում

1) Միջբանկային փոխանցումների դեպքում

Վճարման շղթան					Ժամկետ
Առանց միջնորդի (լորո/նոստրո հաշիվների միջոցով)					
ԲՄ1	ԲԳ1	-	ԲԳ2	ԲՄ2	(1) +1*
-	ԲԳ1	-	ԲԳ2	-	(1)+1
ԲՄ1	ԲԳ1	-	ԲԳ2	-	(1)+1
-	ԲԳ1	-	ԲԳ2	ԲՄ2	(1)+1
Միջնորդի միջոցով					
ԲՄ1	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	ԲՄ2	(1)+1**
-	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	-	(1)+1
ԲՄ1	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	-	(1)+1
-	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	ԲՄ2	(1)+1

** Փակագծում նշված մեկ օրը ներառում է վճարողին սպասարկող բանկի տարածքային ստորաբաժանման կողմից վճարման կարգադրության ստացման օրը, իսկ «+1»-ը նշանակում է, որ շահառուին վճարումը կատարվելու է առավելագույնը վճարման կարգադրության ստացման օրվան հաջորդող գործառնական օրվա ընթացքում:*

*** Փակագծում նշված մեկ օրը ներառում է վճարողին սպասարկող բանկի տարածքային ստորաբաժանման կողմից վճարման կարգադրության ստացման օրը, իսկ «+1»-ը նշանակում է, որ շահառուին վճարումը կատարվելու է առավելագույնը վճարման կարգադրության ստացման օրվան հաջորդող գործառնական օրվա ընթացքում, եթե շահառուի բանկի հաշիվը միջնորդ բանկում կրեդիտագրվում և վերջնահաշվարկը կատարվում է շահառուին սպասարկող բանկի գործառնական օրվա ընթացքում:*

2) Վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով կատարված փոխանցումների դեպքում

Վճարման շղթան							Ժամկետ
Առանց վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկի և շահառուին սպասարկող բանկի միջև միջնորդի							
ՎԿՄ	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	-	ԲԳ2	ԲՄ2	(1) +2*
-	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	-	ԲԳ2	ԲՄ2	(1)+2
-	ՎԿԳ	-	ԲԳ1	-	ԲԳ2	ԲՄ2	(1)+2
ՎԿՄ	ՎԿԳ	-	ԲԳ1	-	ԲԳ2	ԲՄ2	(1)+2
ՎԿՄ	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	-	ԲԳ2	-	(1)+2
-	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	-	ԲԳ2	-	(1)+2
-	ՎԿԳ	-	ԲԳ1	-	ԲԳ2	-	(1)+2
ՎԿՄ	ՎԿԳ	-	ԲԳ1	-	ԲԳ2	-	(1)+2
Վճարահաշվարկային կազմակերպությանը սպասարկող բանկի և շահառուին սպասարկող բանկի միջև միջնորդի միջոցով							
ՎԿՄ	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	ԲՄ2	(1)+2**
-	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	ԲՄ2	(1)+2
-	ՎԿԳ	-	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	ԲՄ2	(1)+2
ՎԿՄ	ՎԿԳ	-	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	ԲՄ2	(1)+2
ՎԿՄ	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	-	(1)+2
-	ՎԿԳ	ԲՄ1	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	-	(1)+2
-	ՎԿԳ	-	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	-	(1)+2
ՎԿՄ	ՎԿԳ	-	ԲԳ1	ՄԻՋ	ԲԳ2	-	(1)+2

** Փակագծում նշված մեկ օրը ներառում է վճարողին սպասարկող վճարահաշվարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանման կողմից վճարման կարգադրության ստացման օրը, իսկ «+2»-ը նշանակում է, որ շահառուին վճարումը կատարվելու է առավելագույնը վճարման կարգադրության ստացման օրվան հաջորդող 2-րդ գործառնական օրվա ընթացքում:*

*** Փակագծում նշված մեկ օրը ներառում է վճարողին սպասարկող վճարահաշվարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանման կողմից վճարման կարգադրության ստացման օրը, իսկ «+2»-ը նշանակում է, որ շահառուին վճարումը կատարվելու է առավելագույնը վճարման կարգադրության ստացման օրվան հաջորդող 2-րդ գործառնական օրվա ընթացքում, եթե շահառուի բանկի հաշիվը միջնորդ բանկում կրեդիտագրվում և վերջնահաշվարկը կատարվում է շահառուին սպասարկող բանկի գործառնական օրվա ընթացքում:*

3) Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջեին ուղղված վճարումների դեպքում

Վճարման շղթան						Ժամկետ
-	-	ԲՄ	ԲԳ	ԿԲ	Գ	(1) +1*
-	-	-	ԲԳ	ԿԲ	Գ	(1)+1
ՎԿՄ	ՎԿԳ	ԲՄ	ԲԳ	ԿԲ	Գ	(1)+2
-	ՎԿԳ	ԲՄ	ԲԳ	ԿԲ	Գ	(1)+2
-	ՎԿԳ	-	ԲԳ	ԿԲ	Գ	(1)+2
ՎԿՄ	ՎԿԳ	-	ԲԳ	ԿԲ	Գ	(1)+2

** Փակագծում նշված մեկ օրը ներառում է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբաժանման կողմից վճարման կարգադրության ստացման օրը, իսկ «+1»-ը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության գանձապետարանի հաշիվը Կենտրոնական բանկում կրեդիտագրվում է և վերջնահաշվարկը կատարվում է առավելագույնը վճարողի վճարման կարգադրության ստացման օրվան հաջորդող գործառնական օրվա ընթացքում:*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով

կարգավորել կորպորատիվ ներդրումային ֆոնդերի կանոնադրությունների, պայմանագրային ներդրումային ֆոնդերի կանոնների ներկայացման ընթացակարգերը, ինչպես նաև հստակեցնել կորպորատիվ ներդրումային ֆոնդերի կողմից կնիք կիրառելու հետ կապված հարաբերությունները,

հիմք ընդունելով

«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, 21-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը, 23-րդ հոդվածի 3-րդ մասը, 24-րդ հոդվածի 4-րդ մասը, 25-րդ հոդվածի 6-րդ մասը, 90-րդ հոդվածի 6-րդ մասը, 98-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի «Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» թիվ 117-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/11-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-ՆԵԹ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրման միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի էֆ» ֆորմատով:»:

2) Կանոնակարգը լրացնել 4.1-4.9 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն կանոնակարգով նախատեսված կարգով Կենտրոնական բանկ գրանցման ներկայացված կանոնադրությունները, կանոնները (դրանցում փոփոխությունները, լրացումները) տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունները, կանոնները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ ոչ հրապարակային ֆոնդերի: Ընդ որում, սույն կանոնակարգով նախատեսված կանոնադրությունները, կանոնները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

4.2. Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները, կանոնները (դրանցում փոփոխությունները, լրացումները) տրամադրվում են համապատասխան անձին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով:

4.3. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրերի ձևերի) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական, և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. օգոստոսի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.09.2015 թ. (ՀՀԳՏ N23 (535), 15.09.2015):

4.4. էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Կառավարչի կամ ֆոնդի անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	Ֆայլի ընդլայնումը

Օրինակ՝

ԱԲԳ	_	Միջնորդագիր	_	Կանոնադր. փոփ.	_	250615	.	pdf

4.5. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում՝ հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

4.6. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:

4.7. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսվում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

4.8. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա փոփոխված փաստաթղթերը կրկին պետք է ներկայացվեն Կենտրոնական բանկ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4.9. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, նախնական թույլտվության ստացման համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:»:

3) Կանոնակարգի 5-րդ կետում.

ա. 1-ին ենթակետից հանել «, որը ստորագրվում է միջնորդագիր ներկայացնողի իրավասու անձի կողմից և ներկայացվում» բառերը,

բ. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ֆոնդի կանոնադրությունը: Ընդ որում՝ ֆոնդի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 7.1-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:»,

գ. 11-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

4) Կանոնակարգի 8-րդ կետի 1-ին ենթակետում.

ա. «ա» պարբերությունից հանել «՝ ֆոնդի ժողովի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ֆոնդի կնիքով (առկայության դեպքում)» բառերը,

բ. «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. ֆոնդի կանոնադրությամբ փոփոխությունները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը: Ընդ որում, կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 7.2-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ»,

գ. «դ» պարբերությունից հանել «ֆոնդի պահառուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից ստորագրված և ֆոնդի պահառուի կնիքով վավերացված (առկայության դեպքում)» բառերը,

դ. «ե» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

5) Կանոնակարգի 8-րդ կետի 2-րդ ենթակետի ,աե պարբերությունից հանել ,՝ ֆոնդի ժողովի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ֆոնդի կնիքով (առկայության դեպքում)» բառերը:
6) Կանոնակարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետի ,աե պարբերությունից հանել ,՝ ֆոնդի ժողովի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ֆոնդի կնիքով (առկայության դեպքում)» բառերը:
7) Կանոնակարգի 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
8) Կանոնակարգի 12-րդ կետում.
ա. 1-ին ենթակետից հանել «, որը վավերացվում է կառավարչի իրավասու անձի կողմից և ներկայացվում» բառերը,
բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) ֆոնդի կանոնները: Ընդ որում, կանոնները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 7.3-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ»:
9) Կանոնակարգի 14-րդ կետի 1-ին ենթակետում.
ա. «ա» պարբերությունից հանել «կառավարչի տնօրենների խորհրդի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված կառավարչի կնիքով (առկայության դեպքում),» բառերը,
բ. «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«գ. ֆոնդի կանոնների փոփոխությունները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը: Ընդ որում, կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 7.4-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ»,
գ. «դ» ենթակետից հանել «ֆոնդի պահառուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից ստորագրված և ֆոնդի պահառուի կնիքով վավերացված (առկայության դեպքում)» բառերը,
դ. «զ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:
10) Կանոնակարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունից հանել «կառավարչի տնօրենների խորհրդի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված կառավարչի կնիքով (առկայության դեպքում),» բառերը:
11) Կանոնակարգի 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
12) Կանոնակարգի 18-րդ կետում.
ա. 1-ին ենթակետից հանել «, որը վավերացվում է միջնորդագիր ներկայացնողի իրավասու անձի կողմից և ներկայացվում» բառերը,
բ. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«4) ֆոնդի կանոնադրությունը: Ընդ որում՝ ֆոնդի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 7.1-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:»:
13) Կանոնակարգի 26-րդ կետում.
ա. 1-ին ենթակետից հանել «, որը վավերացվում է կառավարչի (եթե ոչ հրապարակային ֆոնդի գործադիր կառավարումն իրականացնելու է կառավարիչ չհանդիսացող այլ անձ՝ ոչ հրապարակային ֆոնդի գործադիր կառավարումն իրականացնող անձի) իրավասու անձի կողմից և ներկայացվում» բառերը,
բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) ֆոնդի կանոնները: Ընդ որում, կանոնները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 7.3-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ»:
14) Կանոնակարգի 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«35. Գրանցման վկայականն օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում կորպորատիվ ֆոնդը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում գրանցման վկայականի կրկնօրինակը ստանալու համար, ինչպես նաև գրանցման վկայականի կորստի մասին Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակելու համար:»:
15) Կանոնակարգի 40-րդ կետում.
ա. 1-ին ենթակետից հանել «վավերացվում է կառավարչի կամ օտարերկրյա ֆոնդի իրավասու անձի կողմից և ներկայացվում» բառերը,
բ. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Կանոնադրությունը, այլ հիմնադիր փաստաթղթերը, պայմանագրային ֆոնդի կանոնները: Ընդ որում, կանոնադրությունը, պայմանագրային ֆոնդի կանոնները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 7.1-ով, Հավելված 7.3-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ»:
16) Կանոնակարգի Հավելված 4-ից (1 տեղ), Հավելված 6-ից (1 տեղ) և Հավելված 7-ից (1 տեղ) հանել «Կ.Տ.» բառը:

17) Կանոնակարգի Հավելված 5-ն ուժը կորցրած ճանաչել:
18) Կանոնակարգը լրացնել Հավելված 7.1-ով, Հավելված 7.2-ով, Հավելված 7.3-ով, Հավելված 7.4-ով՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 3-ի և Հավելված 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
27 օգոստոսի 2015 թ., N 188-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի օգոստոսի 25-ի թիվ 188-Ն որոշմամբ

Հավելված 7.1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշմամբ հաստատված
կանոնակարգ 10/11-ի

Կորպորատիվ ֆոնդի կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է	ԳՐԱՆՑՎԱԾ է
_____ *(իրավասու մարմնի անվանումը)*	ՀՀ կենտրոնական բանկում
__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ	
_____ *(իրավասու անձի պաշտոնը)*	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____ *(անուն, ազգանուն, ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Կորպորատիվ ֆոնդի լրիվ անվանումը

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
2015 թվականի օգոստոսի 25-ի թիվ 188-Ն որոշմամբ

Հավելված 7.2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշմամբ հաստատված
կանոնակարգ 10/11-ի

Կորպորատիվ ֆոնդի կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(ընկերության, իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է _____ __/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____
(իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Կորպորատիվ ֆոնդի լրիվ անվանումը
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
2015 թվականի օգոստոսի 25-ի թիվ 188-Ն որոշմամբ

Հավելված 7.3
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշմամբ հաստատված
կանոնակարգ 10/11-ի

Պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների տիտղոսաթերթ

Պայմանագրային ֆոնդի ՀՎՀՀ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____
(իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(ստորագրություն)

ԿԱՆՈՆՆԵՐ

_____
Կառավարչի և ֆոնդի լրիվ անվանումը

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
2015 թվականի օգոստոսի 25-ի թիվ 188-Ն որոշմամբ

Հավելված 7.4
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշմամբ հաստատված
կանոնակարգ 10/11-ի

Պայմանագրային ֆոնդի կանոնների փոփոխության տիտղոսաթերթ

Պայմանագրային ֆոնդի ՀՎՀՀ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
_____
(իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

Փոփոխված է _____ __/__/_____ թիվ _____ որոշմամբ
_____
(իրավասու մարմնի անվանումը)

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
_____
(ստորագրություն)

_____
(իրավասու անձի պաշտոնը)
_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆՆԵՐ

_____
Կառավարչի և պայմանագրային ֆոնդի լրիվ անվանումը
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 325-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների կուտակային հատկացումների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասը, 47-րդ հոդվածի 6-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի ««Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ը հաստատելու մասին» թիվ 325-Ն որոշմամբ հաստատված «Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգը լրացնել 14-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14. Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող երկրորդ աշխատանքային օրը երաշխիքային ֆոնդը կառավարող անձին տրամադրում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից կառավարվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի զուտ ակտիվների արժեքը (Հայաստանի Հանրապետության դրամով) յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրվա դրությամբ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի:»,

2) Կանոնակարգի Հավելված 1-ի

ա. աղյուսակ 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի,

բ. աղյուսակներ 2.1-ի, 2.3-ի և 2.4-ի մեկնաբանություններում „***** 4-րդ, 5-րդ, և 6-րդ սյունակների շեղումները» բառերը փոխարինել «***** 4-րդ և 5-րդ սյունակների շեղումները» բառերով,

գ. աղյուսակ 2.5-ի մեկնաբանությունում «* Հաստատության վարկանիշը» և «*** Վարկանիշ տված կազմակերպությունը», «** Վարկանիշի տրման ամսաթիվը» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերը:

3) Կանոնակարգը լրացնել Հավելված 2-ով՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հոկտեմբերի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
9 սեպտեմբերի 2015 թ., N 193-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. սեպտեմբերի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.09.2015 թ. (ՀՀԳՏ N23 (535)[1], 22.09.2015):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 193-Ն որոշմամբ

«Աղյուսակ 1. Երաշխիքային ֆոնդի միջոցների շարժը

(հզ. դրամ)

1	Երաշխիքային ֆոնդի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	
2	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդի ներդրումների մարումներից մուտքեր	
3	Այլ մուտքեր (3.1+3.2+3.3+3.4), այդ թվում՝	
3.1	երաշխիքային ֆոնդի միջոցների կառավարումից ստացված եկամուտներ	
3.2	նախկինում հատուցած գումարների ստացում կառավարիչներից	
3.3	այլ եկամուտներ	
3.4	այլ մուտքեր	
4	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված երաշխիքային վճարներ (4.1+4.2), այդ թվում՝	
4.1	պարբերաբար երաշխիքային վճարներ	
4.2	միանվագ երաշխիքային վճարներ	
5	Գործառնական, վարչական ծախսեր և կապիտալ ներդրումներ	
6	Հատուցման հետ կապված ծախսեր (6.1+6.2), այդ թվում՝	
6.1	հատուցված գումարներ	
6.2	հատուցման հետ կապված այլ ծախսեր	
7	Գործառնական, վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների գծով կատարված վճարներ	
8	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդի միջոցների ներդրումները	
9	Երաշխիքային ֆոնդի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի վերջում (1+2+3+4-5-6-7-8)	
10	Կառավարիչների կողմից ուշացված վճարումներ	
11	Կառավարիչների կողմից չկատարված վճարումներ	

»:

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 193-Ն որոշմամբ

«Հավելված 2
«երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև
տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Եռամսյակային)

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը «__» _____ ____ թ.

Ֆոնդի տեսակը	Կառավարիչ 1*	Կառավարիչ 2*	...
Կայուն եկամտային			
Պահպանողական			
Հավասարակշռված			

**«Կառավարիչ 1», «Կառավարիչ 2», «...» փոխարեն լրացվում է այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լրիվ ֆիրմային անվանումը, որի կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքները լրացման են ենթակա տվյալ սյունակում»:*

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2015)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 24

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 27

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 32

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 33

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 43

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 65

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների

Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների

ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը

Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի ավանդներ 76

Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 78

Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը

ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը

ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը

ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ

Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ

Կառավարման վերցված միջոցներ

Պահառության վերցված արժեթղթեր

ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Գրավատների ցուցանիշներ

Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ

Վճարահաշվարկային համակարգ 86

Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ

ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ

ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների

ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2015թ. օգոստոս*	*2015թ. օգոստոսի իրական աճի ինդեքսը 2014թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*2015թ. սեպտեմբեր*	*2015թ. սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2014թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*
